



17.10.2012

Այսօր կրկին «Էրեբունի» արգելոց-թանգարանում էին «Պատանի հնագետ» դպրոցի առաջին սաները, որոնց համար հատուկ դաս էր պատրաստել ճանաչված հայագետ, Լեյդենի համալսարանի (Նիդերլանդներ) դասախոս Հրաչ Մարտիրոսյանը:

Դասախոսությունը, որը վերաբերում էր հայոց լեզվի ծագման և զարգացման հիմնահարցերին, պատանի հնագետներն ունկնդրեցին մեծ հետաքրքրությամբ և բազմաթիվ հարցեր ուղղեցին դասախոսին: Նրանցից ոմանք, անգամ, փորձեցին լրացումներ անել և բանավիճել հայագետի առանձին դիտարկումների շուրջ: Դասը հատկապես աշխույժ ընթացավ բարբառների վերաբերող հատվածում, երբ երեխաները օրինակներ բերեցին իրենց պապերից լսած գյուղական բարբառներից և փորձեցին համեմատություններ անել:

Դասախոսության ավարտին Հ. Մարտիրոսյանը խոստովանել է, որ իր համար անսպասելի էր այս տարիքի երեխաների հետաքրքրությունը հնագիտության և հայագիտության հարցերի վերաբերյալ: